ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2018, 71, № 1, 93-95

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱԴԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

2018թ. մարտի 5-ին լրացավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի օգտակար հանածոների լաբորատորիայի առաջատար գիտական աշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիայի, Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Կարապետ Մուրադի Մուրադյանի ծննդյան 80-ամյակը:

Կ.Մ.Մուրադյանը ծնվել է 1938թ. Երևանում: 1960թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և աշխատանքի է անցել Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) օգտակար հանածոների և մետաղագոյացման բաժնում, որտեղ և աշխատում է մինչև այժմ: Անցած տարիների ընթացքում նա հաջորդաբար զբաղեցրել է ինժենների, ասպիրանտի, կրտսեր գիտ.աշխատողի, ավագ գիտ.աշխատաողի, առաջատար գիտ.աշխատողի, լաբորատորիայի վարիչի պաշտոնները:

1962թ. Կ.Մուրադյանն ընդունվել է ասպիրանտուրա և գործուղվել է Մոսկվա՝ գիտական ղեկավար պրոֆեսոր Վ.Ն.Կոտլյարի մոտ ուսանելու: 1967թ. Երևանի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Բազումի միջին Էոցենի սուբհրաբխային համալիրի երկրաբանությունը և հանքաբերությունը» թեմայով:

Կ.Մուրադյանի հետագա գիտական ուսումնասիրությունները շարունակվել են Վիրահայոց-Տավուշ (Շամշադին)-Արցախ-Կապանի և Ամասիա-Սևան-Հագարի հրաբխածնա-մետաղագոյացման գոտիներում՝ նրանց հանքային շրջաններում: Այդ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են նրա «Փոքր Կովկասի կենտրոնական մասի հրաբխածին ֆորմացիաների հանքաբերությունը» դոկտորական ատենախոսությունում, որը նա հաջողությամբ պաշտպանել է 1987թ. Թբիլիսիում՝ Կովկասի Հանքային Ռեսուրսների ինստիտուտում:

1988-1994թ. Կ.Մուրադյանը մասնակցել է Սպիտակի երկրաշարժային տարածքի 1:50000 և ՀՀ 1:200000 մասշտաբի մագմայական ու մետաղագոյացման քարտեզների կազմման աշխատանքներին: Նրա կողմից առաջին անգամ կազմվել են Բազումի և Տավուշի (Շամշադինի) հանքային շրջանների էտապային հնաֆացիալ-հնահրաբխածնական և այդ հիմքի վրա կանխագուշակումա-մետաղագոյացման խոշորամասշտաբ (1:50000) քարտեզներ, որոնք հնարավորություն են տվել նորովի գնահատել այդ շրջանների հանքաբերության հեռանկարները: Կ.Մուրադյանը, որպես ԽՍՀՄ ԳԱ հնահրաբխածնական-մետաղագոյացման հանձնաժողովի անդամ, ավելի քան երկու տասնամյակ մասնակցել է նախկին Խորհրդային Միության, Կովկասի և Հայաստանի Հանրապետության հնահրաբխածնական և մետաղագոյացման եզակի ատլասների՝ 1:5000000, 1:1000000 և 1:500000 մասշտաբերի էտապային քարտեզների կազմման աշխատանքներին (ակադ. Ռ. Ջրբաշյանի հետ համատեղ):

Կ.Մուրադյանը մասնակցել է ՀՀ բնատարածքի մագմատիզմի, մետամորֆիզմի և հանքային ֆորմացիաների 1:300000 մասշտաբի քարտեզի կազմման աշխատանքներին:

Նա մշակել է Փոքր Կովկասի տարածքի երկրադինամիկական զարգացման մոդելը, վերհանել է նրա կիրառական նշանակությունը:

Կ.Մուրադյանի ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են ավելի քան 152 գիտական աշխատություններում, որոնք նվիրված են Փոքր Կովկասի և Միջերկրածովային (Ալպ-Հիմալայան) գոտու կենտրոնական հատվածի բնատարածքին բնորոշ օգտակար հանածոների հանքավայրերի կարևոր հիմնախնդիրներին: Կ.Մուրադյանը զեկուցումներով բազմիցս հանդես է եկել տարբեր հանրապետական, համամիութենական, միջազգային խորհրդակցություններում, գիտաժողովներում, սիմպոզիումներում:

Շուրջ երեք տասնամյակ Կ.Մուրադյանը գիտական ուսումնասիրությունները համատեղել է մանկավարժական գործունեության հետ: Դոցենտի և պրոֆեսորի պաշտոններում նա դասավանդել է Երևանի Պետական համալսարանի Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետում, ՀՀ Կառավարման ակադեմիայում, ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնում:

2001թ. Կ.Մուրադյանը ընտրվել է Բնական Գիտությունների Ռուսաստանի ակադեմիայի իսկական անդամ, 2009թ. Բնության և հասարակության մասին Գիտությունների Միջազգային Ակադեմիայի իսկական անդամ: 1991թ.-ից նա հանդիսանում է Հանքավայրերի Ծագումնաբանական Միջազգային ասոցիացիայի անդամ (IAGOD):

Կ.Մուրադյանը ԵԳԻ-ում գործող թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների աստիճանաշնորհման 054 գիտական խորհրդի անդամ է:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտի անձնակազմը, ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբա-

գրությունը սրտանց շնորհավորում են վաստակաշատ երկրաբան Կ.Մուրադյանին ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, մաղթում նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք և բեղմնավոր աշխատանք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն